

Այս կարծիքին ի նպաստ կը յիշուին Եւսեբիոս, Յերոնիմոս, Սողոմէն և ուրիշ յետնագոյն վկաներ, որոնց գրուածքները մէջ չեմ բերեր, վասն զի յիշուած իրողութիւնը ստոյգ է:

Արդ, շատ անձեր ըստ կամս չեն ընդունիր թէ իրողութեան մը խնդրոյն վրայ երկրին մէջ ապրող գիտնական մարդոց վկայութիւնը զոհուի սխալելու ենթակայ ընդօրինակողներուն անգիտակից աւանդութեան: Մարդիկ ինձ կ'ըսեն. ինչո՞ւ համար Պաղեստին կը գտնուիք, եթէ ոչ աւելի ձեռնհասութիւն ըստանալու տեղագրական խնդիրներու մէջ:

Բայց մենք Պաղեստին չենք գտնուիր երկրին բոլոր աւանդութիւնները պաշտպանելու, կը ջանանք ճանչնալ զանոնք իրենց բոլոր հաւանականութիւններով և աշխարհագրական անկարելիութիւններով, սուսուֆնասիրելու համար զանոնք քննադատական օրինակներու համաձայն:

Կ'աշխատինք հաստատել նուիրական ընագիրին և աւանդութեան վիճակը Գ. դարու վախճանին, կամ աւելի լաւ կը քննենք կրկին աւանդութեան վիճակը, գրաւոր և բերանացի աւանդութիւնը: Եթէ գրաւոր աւանդութիւնը չի տարբերիր Գ. դարու սկիզբը, պիտի տեսնուի որ նախամեծարութիւն պիտի տրուի բերանացի աւանդութեան վրայ: Այն ատեն զիտելի կ'ըլլայ որ խնդիրը հոս եկեղեցական բերանացի աւանդութեան մը վրայ չէ, որուն հեղինակութիւնը կը հաւասարի Ս. Գրոց հեղինակութեան: Խնդիրը տեղական աւանդութեան մը վրայ է...: Աւելի հաւանակա՞ն է որ բոլոր մարդիկ, ձեռագիրներ և թարգմանութիւններ սխալին ընդօրինակութեան մը մէջ, կամ թէ մեծ և նշանաւոր քաղաքի մը մարդիկը՝ Աւետարանին յի-